



Սայաթ Նովա

Յիս մե դարիբ բուլբուլի պես

Էս Արուֆինի ասած է. դագալի: Էս Էրկու խաղը մի հանգով է, ով որ սովորի
Դոստի խաղի ձենով ասի, թե որ չիմանաս հարցրու թե՝ Գոգալար յիղնաղինա
բախ, դաստա-բեդաստա թարփանուր:

Յիս մե դարիբ բուլբուլի պես, դուն օսկե դափագի նըման.
Էրեսըս դի վուտիդ տակը՝ ա՛նց կաց, փիանդագի նըման.
Յա՛ր, քեզիդ խոսիլ իմ ուզում՝ շահի իլթիմագի նըման.
Աջաիբ սուրաթի տեր իս՝ ռանգըդ է գուլգագի նըման:

Յա՛ր, մըտիլ իս բաղչի մեշը, աջայիբ սեյրան իս անում,
Շուխսկդ արեգագի նըման է՝ տեսնողին հեյրան իս անում.
Զիգարըս կըրակ իս տըվի, Էրվում իս՝ բիրյան իս անում.
Վո՛ւնց մե գոգալ չէ ունեցի՝ Էտ քու արած նագի նըման:

Հենց իմացի, յա՛ր, քու դուլն իմ, թանգ հախով գընած չըրադ իմ,
Յա՛ր, դըռանըդ նընգած ըլիմ, օ՛վ տեսնե, ասե՛ տուսադ իմ.
Էշխենեդ հիվանդացիդ իմ, վո՛ւնց մեռնում իմ, վո՛ւնց թե սադ իմ.
Ծովի պես ուրդան իմ տալի, գըժվիլ իմ Արագի նըման:

Օվ կու տեսնե, ջունուն կու լի, բարգ Էրեսիդ խալ իս անում,
Էլ ջուքամը դո՛ւն կու քաշիս, չուն մահիս խիալ իս անում.
Յա՛ր, յիս քիզ բարով իմ տալի, շուռ իս գալի, դալ իս անում,
Չունքի խոսկըդ անց է կենում բելլու՝ շահ-անդագի նըման:

Սայաթ Նովեն ասաց՝ գու լամ, չիմ լաց լի՝ թե ճար ունենամ.
Էլ յիս կու քաշիմ Էս դուսեն՝ թո՛ղ լի ահ ու զար ունենամ.
Յա՛ր, քիզ վրբեն արք ունենամ, մե լավ իխտիար ունենամ՝
Առնում, տանիմ մեջլիսները օսկեջրած սագի նըման: